

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ
ԱՆՁՆԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԳՈՐԾՈՆՆԵՐԸ¹⁶**

*Պապոյան Վ. Ռ., Կարապետյան Մ. Ա. (Երևանի պետական համալսարան,
Երևան, Հայաստան)*

vpapoyan63@gmail.com, karapetyanmilen@gmail.com

Ներկայացման ամս.՝ 30.07.2019

գրախոսման ամս.՝ 05.08.2019

տպագրության ընդունման ամս.՝ 17.09.2019

Հոդվածում ներկայացված են անձնային և սոցիալ-հոգեբանական այն գործոնները, որոնք ազդեցություն են ունենում մասնագիտության ընտրության գործընթացի վրա: Հոգեբանական չափման տեսանկյունից դիտարկվել են վերահսկողության լոկուսի, ինքնուրույնության և նախաձեռնողականության դերը մասնագիտության ընտրության հարցում: Որպես սոցիալ-հոգեբանական գործոններ ընտրվել են մասնագիտության պահանջարկը, առարկայական նախասիրությունները, գիտելիքը, բուհական հաստատության վարկանիշը, հեղինակավոր մեծահասակների և հեղինակավոր անձանց խորհուրդները և այլ: Հետազոտությունն իրականացվել է ավարտական կուրսերում սովորող տարբեր մասնագիտությամբ քառասուն ուսանողների հետ: Հետազոտությունն իրականացվել է հարցարանային մեթոդով, մասնավորապես կիրառվել են լոկուս հսկման, ինքնուրույնության և նախաձեռնողականության չափման հարցարանները, և մեր կողմից մշակված հարցաթերթ, որն ուղղված էր մասնագիտության ընտրության հիմքում ընկած հնարավոր պատճառների՝ սոցիալ-հոգեբանական գործոնների, դուրսբերմանը: Արդյունքում պարզվել է, որ վերոնշյալ հոգեբանական բնութագրիչները կանխորոշող նշանակություն ունեն այն հարցում, թե ինչպիսի գործոնների հիման վրա են ապագա ուսանողներն ընտրում իրենց մասնագիտությունը:

Հանգուցային բառեր՝ *մասնագիտության նախընտրություն, անձնային բնութագրումներ, սոցիալ-հոգեբանական գործոններ, վերահսկողության լոկուս, ինքնուրույնություն, նախաձեռնողականություն:*

Անձի ձևավորման և այդ գործընթացին զուգընթաց մասնագիտության ընտրության հոգեբանական ասպեկտները երկար ժամանակ է ինչ հանդիսանում են գիտական ուսումնասիրությունների օբյեկտ, ինչը հետևանք է սոցիալական իրականության անընդմեջ և դինամիկ փոփոխությունների: Ժամանակի նոր

¹⁶ «Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ N18T-5A056 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում»

պահանջներին համընթաց օրեցօր փոփոխվում և ավելանում են մասնագիտությունները, համապատասխանաբար՝ փոփոխվում են նաև մարդկանց պատկերացումները մասնագիտությունների նշանակալիության, արդիականության և ինչու ոչ նաև գրավչության վերաբերյալ [5]: Հաշվի առնելով վերոնշյալ սոցիալական դինամիկ փոփոխությունները հարկ է նշել, որ այսօր մասնագիտության ընտրությունը գործընթաց է, որը պայմանավորված է ինչպես մի շարք արտաքին, այնպես էլ ներքին գործոններով: Որպես արտաքին գործոններ կարող ենք դիտարկել.

- Նոր մասնագիտությունների առաջ գալը, որոնք չունեն արմատներ մեր հասարակության մշակույթում (օրինակ՝ մոդելավորող, դիզայներ, գովազդային գործակալ և այլն):
- Սովորողների տեղեկացվածության պակասը տարբեր մասնագիտությունների բնույթի և դրանց ձեռքբերման ուղիների վերաբերյալ:
- Թյուր պատկերացումները կոնկրետ մասնագիտության պահանջների վերաբերյալ, որոնք ներկայացվում են տվյալ մասնագետին:
- Բազմաթիվ ուսումնական հաստատությունների առկայությունը, որոնք տարբեր առաջարկներ են կատարում մասնագիտությունների ձեռքբերման վերաբերյալ և այլն [3, էջ 85]:

Որպես ներքին գործոններ կարող ենք դիտարկել անձի առանձնահատկությունները, որոնք իրենց ուրույն դերն են ունենում մասնագիտության ընտրության հարցում: Այս հոդվածի շրջանակներում որպես անձնային բնութագրեր ընտրել ենք նախաձեռնողականությունը, ինքնուրույնությունը, լոկուս վերահսկողությունը և փորձել ենք դուրսբերել դրանց պայմանավորող նշանակությունը մասնագիտության ընտրության գործընթացում: Այս բնութագրերը կարելի է դիտարկել, որպես անձի ֆորմալ-դինամիկ հատկություններ, որոնք արտացոլում են վարքի առանձնահատկությունները, ինչը դրսևորվում է նաև մասնագիտական ինքնորոշման գործընթացում [2]:

Նախաձեռնողականությունը որպես անձնային բնութագիր ենթադրում է անձի անկախությունը կյանքի կարևորագույն որոշումները ընդունելիս, բարձր սոցիալական պատասխանատվության մակարդակ, ճկունություն տարբեր իրավիճակներում: Ինքնուրույնությունը համապատասխանաբար բնութագրվում է անձի հուսալիությամբ և կայունությամբ, սեփական ուժերի հանդեպ իրատեսական վստահությամբ, ինչպես նաև հարմարվողականությամբ: Եվ վերջապես լոկուս վերահսկողություն ասելով հասկանում ենք կայուն անձնային տիպ, որը ենթադրում է մարդու հակվածությունը բացատրել իրողությունների պատճառներն արտաքին կամ ներքին գործոններով [1, 4]:

Հետազոտությունն իրականացվել է ավարտական կուրսերում սովորող տարբեր մասնագիտություններ ունեցող 40 (21-23 տարեկան, արական և իգական սեռերի) ուսանողների հետ: Ընտրանքի այսպիսի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս շրջանում ուսանողները հետընթաց գնահատում են իրենց կատարած ընտրությունը, փորձում են հասկանալ որքանով են տիրապետում

իրենց մասնագիտությանը, ինչպես նաև այս ընթացքում որոշում են կայացնում միևնույն մասնագիտությունը առավել խորը ուսումնասիրելու կամ ընդհակառակը՝ այն փոխելու վերաբերյալ:

Հետազոտությունն իրականացվել է հարցարանային մեթոդով, մասնավորապես՝ կիրառվել են Ջ. Ռոտտերի լոկուս հսկման հարցարանը, որը կազմված է 29 պնդումներից և վերաբերվում է կոգնիտիվ ոճերին, որոնք դրսևորվում են ինչպես ուսումնական, այնպես էլ մասնագիտական ոլորտներում: Քանի որ հոգեկանի կոգնիտիվ բաղադրիչները առկա են նրա բոլոր դրսևորումներում, ապա լոկուս հսկման պատկերացումները տարածվում են անձի բնութագրումների վրա իր գործունեության մեջ [1, էջ 45-50]: Ինքնուրույնության և նախաձեռնողականության չափման հարցարանները, որոնք մշակվել և տեղայնացվել են Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության ԳՀ լաբորատորիայի կողմից: Ինքնուրույնության հարցաթերթը կազմված է 20 հարցերից, որոնցից յուրաքանչյուրն ունի ընտրության երեք տարբերակ, այն դուրս է բերում անձի ադապտիվությունը, ինքնուրույն որոշումներ կայացնելու կամ դրանից խուսափելու հակվածությունը [1, էջ 9-12], Նախաձեռնողականության հարցաթերթի հիմքում Վեքսլերի ինտելեկտի սանդղակի 9-րդ ենթատեսքատն է (D. Wechsler, 1974), որը դուրս է բերում տարբեր իրավիճակներում անձի ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունը, սեփական անձի պատասխանատվությունը՝ այն իրականացնելու համար [1, էջ 13-14], ինչպես նաև մեր կողմից մշակված հարցաթերթ, որն ուղղված էր մասնագիտության ընտրության հիմքում ընկած սոցիալ-հոգեբանական գործոնների դուրսբերմանը: Հարցաթերթն ընդգրկում է 12 պնդումներ:

Մասնագիտության ընտրության համար վերոնշյալ գործոնների և անձնային բնութագրերի կանխորոշող նշանակության դուրս բերման համար իրականացրել ենք լոգիստիկ ռեգրեսիոն վերլուծության քայլային մեթոդը (Forward LR), որը ենթադրում է մոդելի մեջ անկախ փոփոխականների հաջորդական ներառում՝ ելնելով նրանց կշռից:

Ռեգրեսիոն վերլուծությունն իրականացնելու համար ընտրվել են մեր կողմից մշակված հարցաթերթում ամենաշատ ընտրության արժանացած պնդումները: Արդյունքները ներկայացվում են ստորև.

- Ռեգրեսիոն մոդելը վիճակագրորեն նշանակալի է ($p=0.027$) սոցիալ-հոգեբանական այն գործոնի հանդեպ, որը վերաբերում է ծնողական առաջարկին: Վերլուծության արդյունքում դուրս է բերվել, որ նշված հոգեբանական բնութագրերից վերահսկողության լոկուսն է պայմանավորում մասնագիտության ընտրության հիմքում ընկած այս գործոնի նախընտրությունը՝ ծնողների առաջարկը՝ կախյալ փոփոխականի դիսպերսիոն փոփոխայնության 15.9%-ը: Այսպիսի արդյունքը կարելի է համարել սպասելի, քանի որ, մասնագիտության ընտրությունը կատարվում է էքստերնալ կոգնիտիվ ոճով՝ առավելապես հիմնվելով ծնողների՝ որպես ռեֆերենտային անձանց, կարծիքի հիման վրա: Այստեղ կարող ենք խոսել նաև մշակութային ենթատեսքատի դերի կամ

նշանակության մասին, որ կենսակարևոր հարցերում մեծ նշանակություն է տրվում ընտանիքին և հիմնական որոշումները ընդունվում են՝ հաշվի առնելով ծնողների վերաբերմունքը տվյալ ընտրության վերաբերյալ:

- Սոցիալ-հոգեբանական մյուս՝ մասնագիտության պահանջարկ գործոնի համար, ռեգրեսիոն մոդելը ևս վիճակագրորեն նշանակալի է՝ 21.9% դիսպերսիոն փոփոխայնությամբ ($P=0.011$): Մասնագիտության պահանջարկը գործոնի նախընտրությունը պայմանավորված է ինքնուրույնությամբ: Մասնագիտության պահանջարկը, որպես սոցիալ-հոգեբանական գործոն, դիտարկվում է արտաքին մոտիվացիայի տեսանկյունից, և ենթադրում ենք, որ ապագա ուսանողը որպեսզի ընտրություն կատարի ելնելով մասնագիտության պահանջարկից, ինքը ևս պետք է տվյալ մասնագիտությունը իմաստավորի որպես պահանջված: Ստացվում է, որ ինքնուրույնությունը, որպես անձի հուսալիության, սեփական ուժերի հանդեպ իրատեսական վստահությունը արտահայտող բնութագիր կարող է նշանակալի դեր ունենալ այդ իմաստավորման գործընթացում:
- Բարձրագույն ուսումնական հաստատության ընտրության և առարկայական նախընտրության ցուցանիշների վերլուծության արդյունքները վիճակագրորեն նշանակալի չեն, ինչը վկայում է այն մասին, որ մեր ընտրանքի դեպքում մասնագիտություն ընտրություն կատարելու գործընթացում բուիը չի ունենում պայմանավորող նշանակություն: Այսինքն կարող ենք ասել, որ չի կարևորվում մասնագիտության ձեռքբերման համար կրթական հաստատությունը, այլ ընտրությունը կատարվում է ըստ նախընտրած մասնագիտության:
- Ինչ վերաբերում է առարկայական նախընտրությանը, վերլուծության նշանակալիության ցածր ցուցանիշը թերևս պայմանավորված է նրանով, որ մինչև մասնագիտության ընտրությունն ու բուի ընդունվելը ապագա ուսանողները շատ քիչ են ծանոթ այն առարկայացանկին և բովանդակությանը, որը դասավանդվում է տվյալ մասնագիտության ներքո: Կարծում ենք, որ այս ցուցանիշը հետաքրքրական է և առաջարկում ենք, որպեսզի մասնագիտական կողմնորոշման դասընթացներ իրականացվեն շեշտադրելով այս կամ այն մասնագիտության հետ կապված առավել կոնկրետ առարկայացանկի ծանոթացումը՝ ապագա դիմորդների համար, ինչը լավ հիմք կլինի մասնագիտական բովանդակությանը ծանոթանալու և առավել հստակ ու ինքնորոշված ընտրություն կատարել:

Այսպիսով, այս վերլուծությունը փորձ էր պարզելու, թե մասնագիտության ընտրության գործընթացի հիմքում անձնային և սոցիալ-հոգեբանական ինչ գործոններ են ընկած և կարծում ենք, հետագա ուսումնասիրությունները կարող են հիմք հանդիսանալ մասնագիտական կողմնորոշման և ընտրության առավել խորքային ծրագրերի կազմակերպման համար: Նման ծրագրերը թույլ կտան ապագա ուսանողներին ուսումնասիրել և ծանոթանալ մասնագիտությունների բովանդակային մասին և անձին ներկայացվող պահանջներին: Նման մոտեցման

արդյունքում հնարավոր կլինի կատարել առավել հուսալի և կայուն մասնագիտության ընտրություն:

Գրականություն

1. Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Սարգսյան Դ. Յու., Մուրադյան Ե. Բ. Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում, Եր., ԵՊՀ հրատ., 2017, 78 էջ.
2. Буянова Г. В. Темперамент как фактор выбора профессии, Образование и наука № 7 (75), 2010, с. 81-87.
3. Давыдюк Л.В., Истратова О.Н. Мотивы выбора профессии старшеклассниками Раздел III. Прикладные вопросы психологии и педагогики, Известия ТРТУ, № 2, 2005, с. 94-102
4. Климов Е. А. Психология профессионального самоопределения, М.: Академия, 2007, с. 302
5. Ретунская Т. Н. Выбор профессии как психологический феномен, Высшее образование в России № 8-9, 2012, с. 126-130.

ЛИЧНОСТНЫЕ ХАРАКТЕРИСТИКИ И СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ ВЛИЯЮЩИЕ НА ПРОЦЕСС ВЫБОРА ПРОФЕССИИ

Папоян В. Р., Карапетян М. А. (Ереванский Государственный Университет, Ереван, Армения)

В статье представлены те личностные и социально-психологические факторы, которые влияют на процесс выбора профессии. С точки зрения психологического измерения рассматривалась роль локус контроля, самостоятельности и предпринимательства при выборе профессии. Как социально-психологические факторы послужили востребованность профессии, предметное предпочтение, знание, рейтинг ВУЗ-а, советы взрослых и авторитетных людей и т.д. Экспериментальное исследование было проведено с сорока студентами выпускников различных факультетов. Исследование было осуществлено с использованием опросников. В частности, были использованы опросники локус контроля, самостоятельности, предпринимательства и нами разработанный опросник, который направлен на выявление социально-психологических факторов и возможных причин, лежащих в основе выбора профессии. В результате выяснилось, что вышеуказанные психологические характеристики имеют предопределяющее значение в том, на основе каких факторов будущие студенты выбирают свою профессию.

Ключевые слова: *предпочтение профессии, личностные характеристики, социально-психологические факторы, локус контроль, самостоятельность, предпринимательство.*

PERSONAL CHARACTERISTICS AND SOCIO-PSYCHOLOGICAL FACTORS AFFECTING IN THE PROCESS OF PROFESSIONAL SELECTION

Papoyan V. R., Karapetyan M. A. (Yerevan State University, Yerevan, Armenia)

In the article is presented those personal and socio-psychological factors that influence in the process of choosing a profession. From the psychological measurement point of view, the role of locus control, self-independence and initiative were observed in the choice of profession. Demand of the profession, subject preference, knowledge, ranking of the universities, advice of the adults and reputable people have been chosen as a socio-psychological factors. The experimental research was carried out with forty students with different profession in the graduation courses. The research was conducted by queries method, particularly the questionnaire of locus-control, self-independence and initiative measurement were used, and the questionnaire designed by us to eliminate the influence of socio-psychological factors and the possible reasons for choosing a profession. As a result was found out that the above mentioned psychological characteristics have predetermined meaning in a such question, in which factors the future students choose their profession based on.

Keywords: *professional preferences, personal characteristics, socio-psychological factors, locus control, self-independence, initiative.*